ՏԱԳՆԱՊԱԼԻՑ ՀԱՐՑԵՐԸ ՍՊԱՌԻՉ ՊԱՏԱՍԽԱՆ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Ստեփանակերտում իրադրությունը նորից ծայրահեղ սրվել է: Որոշ տարրեր փորձում են բորբոքել ազգամիջյան ընդհարումների կրակը: Մոտ օրերս ԼՂԻՄ է ժամանում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հատուկ հանձնաժողովը: Նորից շարունակվում են չարտոնված միտինգներն ու երթերը, վիրավորանքներ են հասցվում պարետային ծառայության զինվորներին,— մոտավորապես այս բովանդակությունն ունեցավ հատուկ շրջանի պարետ, գնդապետ Գ. Ա. Մուսատովի ելույթը, որ նա ունեցավ հուլիսի 7-ին, կուսակցության Ստեփանակերտի քաղկոմում մարզկենտրոնի ակտիվի հետ հանդիպման ժամանակ:

Հանդիպման մասնակիցների պահանջով պարետը պատմեց հունիսի 7-ի լույս գիշերը Կրկժանում տեղի ունեցած ազգամիջյան ընդհարման մասին:

Ովքե՞ր են եղել միջադեպը հրահրողները. ի՞նչ է արվում հանցավոր, խժդուժ ուժերի հայտնաբերման և խստագույնս պատժելու համար, որտեղի՞ց հայտնվեցին հրթիռները, ռուորդական և ոչ որսորդական հր[illegible]

Հարցերի մյուս խումբը այսպիսի բովանդակություն ուներ. ինչո՞ւ այսպես կոչված «տաք կետերում» անհրաժեշտ քանակությամբ տեխնիկա և այլ ուժեր չեն կենտրոնացվում, որպեսզի հնարավոր չլինի առճակատման հնարավորությունը: Ինչո՞ւ չի վերահսկվում անօրեն կառուցված Կրկժան-Շուշի ճանապարհը, Կրկժան թաղամասում դրությունը կայունացնելու և լարվածությունը թուլացնելու համար ավելի ճիշտ չէ՞ր լինի, եթե այդ գիծը իսպառ խափանվի: Որտեղի՞ց են հայտնվել այդ ճանապարհի վրա աշխատող «ԿԱՄԱԶ» մակնիշի պետական համարանիշ չունեցող բեռնատար ավտոմեքենաները: Ինչո՞ւ թաղամասի աղբյուրի վրա անհրաժեշտ հսկողություն չի սահմանվում, որ պեսզի կրքերի բորբոքման առիթ չլինի:

Հատուկ շրջանի պարետ, գնդապետ Գ. Ա. Մուսատովը խոստացավ հնարավորության սահմանում լուծել առաջադրված հարցերը, հանդիպման ժամանակ առաջադրված պահանջները ներկայացնել ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեին:

Հանդիպումը անցավ լարված մթնոլորտում: Մի շարք փաստերի մասին, մասնավորապես միտինգներին տրված՝ նրա գնահատականի հետ ներկաները արտահայտեցին իրենց անհամաձայնությունը, պահանջելով միաժամանակ, որ ամեն մի օրինախախտում իսկույն կանխվի և մեղավորներին տրվի արժանի պատիժ:

Ա. ԳԱՐԱՔՅԱՆ